


## ՀԱՅԿԱՆԱՅԻՆ ԽՈԶՔԸՐԸՐ ՄԲ. Լ.ՍԵՐՍՈՒՆԻ ԹԱՆԳԱՐԱԿԱՆԻՆ ՄԷջ

Երբ անցեալ տարի բախտն ունեցանց  
200 Միիթարեան սաներով Հոռմ երթալ  
տեսնելու համար Եր. Տէս կոմիտասի մէջ  
հայ ազգի զարաւոր մարտիրոսացումի հան-  
գիսաւոր նույրազործումը, մենց Վատի-  
կանի և խոսաւ. կառավարութեան ազնիւ-

թոյտուութեամբ մը մուտք ունեցանց  
բաղացի բոլոր թանգարանները: Զարմա-  
նալի էր մեր հոգերանութիւնը հեթանոս  
և ըրիստոնեայ Հոռմին շռնալից փառը  
զմեզ շատ բիշ կը յուզէր: Հոռմէական  
Փորիւմի կորուէումի և կապիտոլի ա-  
հաւոր և կործանուած փառքերէն աւելի  
մենց կը փնտուէնց հայկական յիշատակ-  
ներ: Աւ բաղցը էր մեր երկիւզած և զո-  
րվացիր ուխտազնացութիւնը Անտոնիոս  
Պիոսի յունորուալից յաղթութեան մը կո-  
բողին ARMENIS Parthibus Germani-  
sque bello (Հայոց Պարթեաց և Գեր-  
մանացւոց պատերազմին մէջ) (յաղթող)  
գրուած: Ուր 17 զարեր անցեր էին այդ  
սիրելի ու տանջուած անոնին առջեւն,  
և Ահարոնեանի մը զեռ թարմ արցունք-  
ները գժրախտ ու սիրելի Հայաստանի դի-  
մաց իրրեւ ուխտական կանթեղ կը պը-  
պըլային: Մենց տեսանց կոստանդիանոսի  
յաղթութեան կամարին վրայ ձեռքերը  
կապուած հայ արցաներ և զինուորներ:  
Տեսանց Ա. Մարգար Եզիպտացի Հայոց  
1450էն սկսեալ Հոգետունը - ինչպէս և  
Ա. Վաս ներկայ հոգետունը և անոնց  
տակ սիրելեաց կարօտով թաղուած շատ  
ու շատ զարդարներ:

Այդ շրջազայութեան ժամանակ էր որ  
Հատերանի թանգարանին մէջ ունեցանց  
զեղեցիկ անակնկալ մը թազմաթիւ լատին  
արձանազրութիւններու կողքին մենց տե-  
սանց զլիսաւոր անդուղի մէկ զարդուած-  
քի վրայ հայկական խաչքար մը. մեր  
հայեացըն ու զգացումը խառնուցան ի-  
րարու անոյշ յուղումով և մոոցանց շըր-  
շապատը:

Խաչքարը կարծեմ մեր ազգային շըր-  
ջանակներու մէջ բոլորովին անծանօթ է  
գէթ ես չեմ տեսեր որ և է տեղ նշանա-  
կուած: Այսկայն Հոռմայ հնութիւններով  
զրադող հեղինակները զայն ժի դարէն  
կը ճանչնան արդէն:



1246 Հայկական խաչքարը  
Հատերամի թանգարամին մէջ

Բայ Տէ Ռոսսիի, Արմէլինիի<sup>3</sup> և Մա-  
րուքիի<sup>3</sup> խաչքարը հանուած է Հայոց Ա.  
Բակոր հոգետունէն<sup>3</sup> որ կը գտնուէր այժ-  
ու շատ զարդարներ:

1. Armellini - Le Chiese di Roma 1891 էջ 769.  
2. Guida del Museo Lateranense.

3. Հոգետունց վանք չէր այլ ուխտաուրներու հիւրա-  
նոց և հռ բնակող հեկեցականց ունեմ իրենց ընտա-  
նիքու ու պատին: Ժի դարուն Տուրինի Անոնին Հոռմ  
տեղաքրու մենց հետեւալ տեղեկութիւնը կու այս, թէ  
իբ ժամանակ այլ հեկեցին ուներ 12 աստան տեկ-  
նիւով նաև: թէ «Secundum ritum Suum isti Har-  
meni habent uxores et filios» - Այս եկեղեցին կը  
կուէր նաև Ա. Ասուածածին:

ման Ա. Պետրոսի գաւիթի ձախակողմը, բռնելով մաս մը նաեւ արտաքին սանդուղներուն:

Երբ 1450ի ժամանակ ներկայ Ա. Պետրոսի հրմերը կը դրուէին, Առաքեալի զամբանի մօս եղած բռլոր հիւրանոցները կը վերցուէին, շատ ուրիշ ազգերու հնու վերցուեցաւ և Հայոցը որով այդ խաչքարն ալ տարուեցաւ ի Լատերան կործանող ժամանակի մէկ զթառաւ պաշտառունքով: Ըստ 1254ի զրուած յիշատակարանի մը մնեց ունէինք նաեւ ուրիշ հոգեառուն մը Ա. Յովհաննէս և Մատթէոս անունով. սակայն ինձ անծանօթ մնաց անոր տեղը, հակառակ երկար պրպտութերուս:

Խաչքարը ունի շորջ մէկ մեղք երկարութիւն և կէս ալ լայնութիւն, սպիտակ մարմարի վրայ փորագրուած մեծ խաչ մը, և չորս ալ կործանակի խաչեր հայկական ձեւով, ինչպէս վերի լուսանկարէն կը տեսնուի, զոր թանգարաններու տեսչութեան ազնիւ թոյլուութեամբ կարողացայ հանել: Հասաւ լաւ պահուած է և եղած արձանագրութեանց լաւագոյնն է, նայելով խաչի զարգերու քանդակին կը համարձակիմ ըսել թէ հայ արուեստագէտի ձեռք ըլքած պիտի ըլլայ, այնքան նուրբ և այնքան հարազատ արտայատիչ է հայաստանը զարդարող մեր ազնիւ ու սրանչելի խաչքարերուն:

Արձանագրութեան պարունակութիւնն այս է:

«Ի ԱՂ. (1246) Թուիւս ՀԱՅՈՑ ԿԱՆԳՆԵՑԱԿ ԿԱԶՅ Ի ԲԱՐԵԹՈՍՈՒՈՒԹԻՒՆ ՄԹԻԹԱՐԱՑ ԵՒ ՄԵԽԱՅ ԻԿՐՈՑ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱԶԱՐԱՑ ՎԱՆԵՑՈՑ, ՈՒԹ ԵՐԿՐՈԱԿԵՔ ԹԻԵՑԵԼՔ ՅԱՂՅԹԱ»:

Խաչին սորբ զրուած է լատիներէն՝ *Haec Crux consacrata est — (Այս խաչը օծուած է)*:

Թէ ո՞վ է այդ Միկթարը, ես ո և իցէ բանալի մը չունիմ պարզելու համար ա-

նոր ինքնութիւնը: Մօտս ունիմ չորս յիշատակարանը լոյս մը տայ, երբ կը յիշատակէ Աւետիս երէց մը որ 1240ի զրուած յիշատակարանի մը մէջ փիլիսոփայ ախտղոսն ալ ունի, հետեւաբար զիտուն և ունեւոր մէկը պէտք է ըլլայ որովհետեւ բաւական ձեռագիրներու տէր կը տեսնուի:

Այս 1242 յիշատակարանը այսպէս կը վերջանայ, «Արդ ես Աւետիս երէցս ըստացայ զուուր Աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց... և վախճանեալ զաւակին իմյ ՄթիթԱՅին, որ յաշխար... սրով խողովզեցին...»: Շատ հաւանական է որ Աւետիս երէցը կանզնած ըլլայ այս խաչքարը իր զաւկի զժրախտ յիշատակը անմանացնելու համար, իսկ Ստեփանոս Ղազարյա Վանեցին տեղույն նառաջնորդն է ամենայն հաւանականութեամբ: Նոյն 1239ի յիշատակարանը կը յիշէ Սարգիս Մարմաշինեցի առաջնորդը: Իսկ 1240 թուի Աւետարանի յիշատակարանը արդէն կը յիշէ ի հայրապետութեան Ստեփանոսի Ղազարավանեցոյ և այնուհետեւ եկող երկու յիշատակարաններն Ստեփանոսն ունին և կը լրեն Սարգսի անունը:

Խաչքարը կարեւոր արձանագրութիւն մ'է Հռոմայ հայ վանքերու պատմութեան և կեանքին ամբողջական կառուցման համար, զժրախտաբար զես հիմովին ուսումնասիրող մը չեղաւ: \*

Ներկայ խաչքարը առիթ առնելով յաջորդ անգամ հրատարակութեան կու տամ նաեւ այս չորս թանկագին յիշատակարանները հայ վանքերու մասին:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԵԱՆՆԵՍՅԱՆ

1. Հաւաքածոյ Հ. Պ. Աւետիսի, ձեռագիր թանկարին աշխատութիւն, որ յուսանց թէ շուտով լոյս ընծայուի: